ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարության

«12» 04 2002թ.

№207 հրամանով

Տպագրված է ընդամենը օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐՈՒՄ

Գրանցման թիվ 264.140.01712

գրանցման օրը 29 04 2002թ.

Վկայական 01Հ 016493

Պետական Ռեգիստրի Արաքիրի
տարածքային բաժնի պետ

20.04.02թ.

«ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՎԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրությամբ)

ք. Երևան – 2002 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

Ընկերությունը ստեղծվել է հիմնադիր հանդիսացող պետական կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Հիմնադիր) 12 մայիսի 1999թ. թիվ 269 հրամանի համաձայն, ՀՀ առողջապահության նախարարության Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ պետական ձեռնարկության (գրանցման № 264 140 01712, վկայական՝ 01Ա 016493, 03 սեպտեմբերի 1995թ.) վերակազմավորման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

1.2. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրառման) պահից:

1.3. Ընկերությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) "Բաժնետիրական ընկերությունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.4. Բաժնետիրոջ (Հիմնադրի) և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրությամբ:

1.5. Ընկերությունը պատասխանատու չէ բաժնետիրոջ պարտավորությունների համար:

Ընկերության բաժնետերը Ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն չի կրում և իրեն պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում է Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար:

Ընկերությունը պատասխանատվություն չի կրում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորությունների համար:

1.6 Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ « ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» Փակ բաժնետիրական ընկերություն

կրճատ՝ «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ

ռուսերեն լրիվ Закрытое акционерное общество "АКАДЕМИКОС С. АВДАЛБЕКЯНИ АНВАН АРОХЧАПАУТЯН АЗГАИН ИНСТИТУТ"

կրճատ՝ ЗАО"АКАДЕМИКОС С. АВДАЛБЕКЯНИ АНВАН АРОХЧАПАУТЯН АЗГАИН ИНСТИТУТ"

անգլերեն լրիվ "AKADEMIKOS S. AVDALBEKYANY ANVAN AROGHJAPAHUTYAN AZGAYIN INSTITUT" Closed Joint-Stock Company

կրճատ՝ "AKADEMIKOS S. AVDALBEKYANY ANVAN AROGHJAPAHUTYAN AZGAYIN INSTITUT" CJSCo

1.7. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝

Հայաստանի Հանրապետություն, 375051, ք.Երևան, Կոմիտասի պողոտա 49/4

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն (այդ թվում՝ կրթական գործունեություն, գիտական և բուժկանխարգելիչ աշխատանքների կազմակերպում) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

2.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

- բժիշկների հետդիպլոմային կրթության, վերապատրաստման, որակավորման և վերատրակավորման պարտադիր ապահովումը.
- դասախոսական կազմի, ինչպես նաև առողջապահության կազմակերպման, ֆինանսավորման, հանրային առողջապահության մասնագետների պատրաստում և վերապատրաստում.
- բնակչության կանխարգելման, կոնսուլտացիոն, ախտորոշման, բուժման, բժշկական վերականգնման, բարձրորակ բուժօգնության կազմակերպում.
- կանխարգելման, ախտորոշման, բուժման և վերականգնողական բժշկության նոր արդյունավետ մեթոդների մշակման և ներդրման ուղղությամբ գիտական հետազոտումների անցկացում.
- հրատարակչական գործունեության իրականացում.
- դեղորայքի, ռեակտիվների, բժշկական սարքավորումների, բժշկական հիգիենիկ պարագաների արտադրության, մեծածախ և մանրածախ առք ու վաճառքի կազմակերպում:

2.3 Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու համար Ընկերությունը՝

- Իրականացնում է աշխատանքներ, ուղղված առողջապահության զարգացման հիմնական ուղղություններից և ռազմավարությունից բխող խնդիրների լուծմանը, գիտականորեն հիմնավորում ու մշակում է առողջապահության կազմակերպման, կառավարման, ֆինանսավորման և տնտեսավարման ժամանակակից մեխանիզմների մոդելները, բժշկատնտեսագիտական ստանդարտները՝ պատրաստելով համապատասխան նորմատիվային փաստաթղթերի նախագծերը,
- Իրականացնում է բարձր որակավորում ունեցող բժշկական մասնագետների, դեղագետների, ստոմատոլոգների պատրաստումը
- Կազմակերպում է բժիշկների, ստոմատոլոգների, դեղագետների, միջին բուժանձնակազմի, դեղագործների գիտելիքների բարձրացման նպատակով հետդիպլոմային շարունակական կատարելագործման աշխատանքները,
- Բնակչության առողջության վիճակի ուսումնասիրման նպատակով անցկացնում է գիտական հետազոտություններ և մոնիտորինգ,
- Իրականացնում է համագործակցություն ՀՀ և արտասահմանյան երկրների կրթական գիտահետազոտական կազմակերպությունների, բուժկանխարգելիչ հիմնարկների հետ՝ կազմակերպում է գիտական փորձի, ինֆորմացիայի և մասնագետների փոխադարձ փոխանակում,
- Գործնական առողջապահության մարմիններին ցուցաբերում է գիտամեթոդական և կազմակերպչական օգնություն,
- Կատարում է գյուտարարական աշխատանքներ, ապահովում է գյուտերի և ռացիոնալիզատորական առաջարկությունների ժամանակին քննարկումը և ներդնումը գործնական առողջապահության մեջ,
- Ձեռնարկում է միջոցներ ուղղված գիտական, կրթական, բուժկանխարգելիչ աշխատանքների պատշաճ մակարդակի ապահովմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը,
- Ապահովում է պարբերաբար գիտական կադրերի պատրաստում և աշխատակիցների գիտական ու արտադրական որակավորման բարձրացումը ցույց է տալիս օգնություն երիտասարդ մասնագետներին իրենց աշխատանքում,
- Իրականացնում է հրատարակչական գործունեություն (նորմատիվ ակտերի , զեկուցագրերի, գիտաուսումնամեթոդական գրականության, տեղեկատվական և այլ նյութերի հրատարակումը և բազմացումը):
- Կազմակերպում է գիտագործնական կոնֆերանսներ, սեմինարներ, նվիրված առողջապահության համակարգի զարգացման, գիտական, ուսումնական, բուժկանխարգելիչ օգնության, կազմակերպչական նոր ձևերի հարցերին:

2.4 Հիմնադրի համաձայնությամբ Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում

նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Ընկերությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածներին կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

3.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ընկերությունը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է:

Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցավոր կամ պատասխանող:

Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, օրենքով սահմանված կարգով բացված բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:

3.2. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, ՀՀ զինանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ:

3.3. Ընկերությունը իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրության կամ անսահմանափակ թվով անձանց առաջարկել այլ կերպ ձեռք բերել դրանք:

3.4. Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում՝ դուստր և կախյալ) հիմնադիր (մասնակից), բացառությամբ Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի:

3.5. Ընկերությունն իրավունք ունի սույն կանոնադրության դրույթների, Օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ(մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

Կառավարչական սոցիալ- մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկ:

Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Ընկերության լիազորագրի հիման վրա:

3.6. Ընկերությունն իրավունք ունի.

⇒ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը.

⇒ ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,

⇒ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,

⇒ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,

⇒ ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով նրա հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ,

⇒ ունենալ միջոցներ արտարժույթով: Օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել (այդ թվում՝ ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք) արտարժույթով միջոցներ և ինքնուրույն տնօրինել, այդ թվում՝ վաճառել պետությանը, իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկություններին, կազմակերպություններին կամ քաղաքացիներին,

⇒ օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների,

⇒ ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին,

⇒ ձեռք բերել իր կողմից տնեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը,

⇒ Հիմնադրի թույլատվությամբ իր կազմում ունենալ, ստեղծել կլինիկաներ, դուստր և կախյալ ընկերություններ, օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.7 Ընկերությունը պարտավոր է.

⇒ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական և վիճակագրական հաշվետվություն,

⇒ ամեն տարի, ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը և հաշվապահական հաշվեկշիռը,

⇒ աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,

⇒ օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտապանների օրինական գույքային պահանջները,

⇒ ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,

⇒ Պետական գրանցումն իրականացնող մարմիններին ծանուցել մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման մասին,

⇒ անհապաղ տեղեկություններ հրապարակել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը ձեռք բերելու մասին,

⇒ կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

4.1 Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել Օրենքով սահմանված չափից:

4.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 241.735.000 (երկու հարյուր քառասուն մեկ միլիոն յոթ հարյուր երեսունհինգ հազար) դրամ, որը կազմում է 48347 հատ սովորական անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 5000 դրամ:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 48347 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը սովորական են:

4.3 Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց և օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է մեծացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ իրացված և վճարված են:

Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն Ընկերության կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում և միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում:

Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունն իր կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր տնտեսական գործունեությամբ առաջացած պարտքերի մարման համար:

Ընկերությունն իր ամենամյա գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է՝

- շահույթի մի մասը ներդնել կանոնադրական կապիտալում՝ տեղաբաշխելով նոր բաժնետոմսեր,
- իրեն պատկանող կանոնադրական կապիտալի չափից ավելի գույքը կամ դրա մասը փոխանցել կանոնադրական կապիտալ:

Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր տնտեսական գործունեությամբ առաջացած պարտքերի մարման համար:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոքրացումը կարող է կատարվել՝

- բաժնետոմսերի անվանական արժեքի նվազեցմամբ,
- բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում Օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

Ընկերության կանոնադրական կապիտալը թույլատրվում է նվազեցնել Օրենքով սահմանված կարգով՝ նրա բոլոր պարտատերերին տեղեկացնելուց հետո: Այդ դեպքում ընկերության պարտատերերը իրավունք ունեն պահանջել՝ վաղաժամկետ կատարելու կամ դադարեցնելու ընկերության պարտավորությունները և հատուցելու իրենց պատճառած վնասները:

Ընկերությունն իրավունք չունի փոքրացնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով նրա չափը կդառնա ավելի փոքր Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված Ընկերության նվազագույն կանոնադրական կապիտալից:

Ընկերության կանոնադրական կապիտալի փոքրացման պատճառով բաժնետիրոջ վճարումները կատարվում են Ընկերության կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումից հետո:

5. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

5.1 Ընկերությունը կարող է տեղաբաշխել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված արժեթղթեր:

5.2 Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել միայն սովորական բաժնետոմսեր: Ընկերության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

5.3 Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխվում են Ընկերության բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման տեսքով:
5.4 Ընկերության Հիմնադրին Ընկերության պետական գրանցումն իրականացնելուց և բաժնետոմսերի արժեքը լրիվ վճարելուց հետո Ընկերության կողմից տրվում է բաժնետոմսերի հավաստագիր (սերտիֆիկատ):

Հավաստագիրը պատրաստվում է տպագրական եղանակով և պետք է պարունակի Օրենքով սահմանված ռեկվիզիտներ:

Հավաստագիրը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության պահանջներին:
5.5 Բաժնետոմսն անբաժանելի է:
5.6 Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից 1 տարվա ընթացքում:

Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է իրականացվել դրամով, արժեթղթերով, այլ գույքով կամ գույքային իրավունքներով, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներով:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարում են լրիվ արժեքով:

Ինչպես Ընկերության հիմնադրման, այնպես էլ բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխման ժամանակ բաժնետոմսերի դիմաց վճարվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

Մինչև բաժնետոմսի արժեքի լրիվ վճարումը, բաժնետոմսի սեփականատերը զրկվում է ձայնի իրավունքից:

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը (չվճարված կամ հետ վերադարձված) չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Այդ բաժնետոմսերը պետք է իրացվեն Ընկերության կողմից՝ դրանք Ընկերությանը փոխանցելու պահից մեկ տարվա ժամկետում: Հակառակ դեպքում՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է որոշում ըն դունի նշված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխման մասին:
5.7 Ընկերությունն ունի պահուստային կապիտալ:

Ընկերության շահույթից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային կապիտալ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

Եթե պահուստային կապիտալը կազմում է Ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, հատկացումներն այդ կապիտալին կատարվում են շահույթի 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային կապիտալն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և Ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթն այդ նպատակին չի բավարարում: Պահուստային կապիտալը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար (բացի օրենքով սահմանված դեպքերից):
5.8. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև սարքման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ կապիտալներ:
5.9. Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվեկշռության տվյալներով՝ ՀՀ իրավական ակտերով սահմանված կարգով:

Եթե Ընկերության գոյության երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքն Ընկերության կանոնադրական կապիտալից փոքր է, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը:

Ընկերության կողմից կանոնադրական կապիտալն օրենքով սահմանված նվազագույն չափից նվազեցնելը հանգեցնում է ընկերության լուծարման:

Եթե սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոքրացման կամ Ընկերության լուծարման մասին որոշում չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, պարտատերերը, ինչպես նաև պետության կողմից լիազորագրված մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարմը դատական կարգով:

6. ՀԻՄՆԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը իրավունք ունի՝

- մասնակցել Ընկերության կառավարմանը,
- ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, այդ թվում ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,
- պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ Ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները և գաղտնիք ներկայացնող փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում է ստուգում պահանջող բաժնետերը,
- Ընկերության ընդհանուր ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,
- Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ սովորական բաժնետոմսեր,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ բան չի նախատեսված,
- օտարել կամ այլ ձևով անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,
- օգտվել օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

6.2 Բաժնետերը պարտավոր է՝

- մասնակցել Ընկերության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով կատարել դրամական և գույքային ներդրումներ,
- չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ:

6.3 Բաժնետերը 6.1 կետով սահմանված իր իրավունքներն իրականացնում է հիմնադիր հանդիսացող պետական կառավարման մարմնի՝ այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերի:

6.4. Բաժնետերը (հիմնադիրը) իր՝ ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքը իրականացնելու նպատակով նշանակում է լիազոր անձանց (ներկայացուցիչների), որոնք բաժնետիրոջ (բաժնետերերի ընդհանուր ժողովի) կողմից տրված իրավասությունների շրջանակներում՝

- որոշումներ են կայացնում Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) նշանակման և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ,

- որոշումներ են կայացնում Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատման վերաբերյալ,
- Հիմնադրին առաջարկություններ են ներկայացնում բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը պատկանող հարցերի, Ընկերության գործունեության կատարելագործման վերաբերյալ,
- իրականացնում են Ընկերության գործունեության մշտական հսկողություն և դիտարկում,
- պարբերաբար, բայց ոչ պակաս եռամսյակը մեկ անգամ, Ընկերության գործադիր մարմնի հետ համատեղ քննարկում են Ընկերության գործունեության արդյունքները և դրանց մասին բաժնետիրոջը (Հիմնադրին) ներկայացնում հաշվետվություն,
- հետևում են ՀՀ օրենսդրության և բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումների իրականացման ընթացքին:

6.5. Լիազոր ներկայացուցիչն իրավունք ունի պահանջելու և ստանալու Ընկերության գործունեության մասին բոլոր փաստաթղթերը:

6.6. Լիազոր ներկայացուցիչն իր գործունեության իրականացման գործընթացին իրավունք ունի ներգրավել Հիմնադրի այլ պաշտոնատար անձանց և մասնագետների:

6.7. Բաժնետերերի ընդհանուր ժողովը լիազոր ներկայացուցչին կարող է վերապահել իրեն վերապահված այլ իրավասություններ:

6.8. Լիազոր ներկայացուցիչն իր իրավասությունների կատարման համար պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Ընկերությունն իրավունք ունի հայտարարել (որոշում ընդունել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային և (կամ) տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Շահութաբաժինները վճարվում են Ընկերության տվյալ տարվա ընթացիկ զուտ շահույթից:

Ինչպես տարեկան, այնպես էլ եռամսյակային և կիսամյակային շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշումների գործունեության ժամկետը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, բայց չի կարող մեկ տարուց ավելի լինել:

Շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի շահութաբաժինների վճարելու մասին որոշմամբ:

7.2 Ընկերությունն իրավունք չունի շահութաբաժիններ հայտարարել և վճարել, եթե՝

- լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը,
- շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկացման) հայտանիշներին, կամ նշված հայտանիշները ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով,
- Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից, կամ դրանից փոքր կդառնա շահութաբաժինների վճարման հետևանքով:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

8.1 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր ժողով՝ բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո 1 ամսվա ընթացքում:

Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Ընկերության ինչպես տարեկան, այնպես էլ արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Հիմնադրի կողմից (բացառությամբ Օրենքի 77-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի), որը որոշում է՝

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը, տեղը և ժամկետը,
- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում նախագահում է Հիմնադրի կողմից նշանակված անձը:

8.2 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
2. Ընկերության վերակազմակերպումը,
3. Ընկերության լուծարումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը,
4. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
5. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
6. բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի մեծացումը
7. բաժնետոմսերի հետ գնման և մարման միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոքրացումը,
8. բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը և մեծացումը
9. Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը
10. Ընկերության պահուստային կապիտալի օգտագործումը,
11. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
12. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
13. Ընկերության անհրաժեշտ ծախսերի նախահաշվի, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և շահութաբաժինների չափի հաստատումը, ինչպես նաև մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը,
14. Ընկերության գույքի շուկայական արժեքի որոշումը, օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը, այդ թվում այլ կազմակերպություններին մասնակցելը,
15. Ընկերության գլխավոր տնօրենի, նրա տեղակալի, բաժինների պետերի, գլխավոր հաշվապահի նշանակում, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
16. Ընկերության գործադիր մարմնի (տնօրինության, վարչության) ձևավորումը նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, գլխավոր տնօրենի, տնօրինության և վարչության անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգը և պայմանները,
17. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
18. Ղեկավար պաշտոնատար անձանց աուդիտն իրականացնող անձի աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը,
19. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը,
20. Ընկերության կողմից կլինիկաների, դուստր ընկերությունների ստեղծումը, դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը,

21.Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
22.Այլ կազմակերպություններին մասնակցելը,
23.Այլ հարցերի, որոնք Օրենքով սահմանված են որպես բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ Ընկերության տնօրենների խորհրդի (դիտող խորհրդի) իրավասության հարցեր:
8.3. Սույն կանոնադրության 8.2. կետի 4,8,9,10,13,14,17,19,20,21,22 ենթակետերով նախատեսված դեպքերում որոշումներն ընդունվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից գլխավոր տնօրենի ներկայացմամբ:
8.4. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 8.5. կետում սահմանված դեպքերից:
8.5.Սույն կանոնադրության 8.2. կետի 1,2,3,5,7,14 ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ժողովին մասնակցելու ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երեք քառորդով:
8.6. 8.2. կետի 11-րդ ենթակետով սահմանված հարցերի վերաբերյալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են Հիմնադրի կողմից սահմանված կարգի համաձայն:
8.7. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները (բացի 8.2. կետի 11-րդ ենթակետով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումներից) կարող են ընդունվել առանց ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկությամբ (Հիմնադրի հարցման միջոցով) կամ Հիմնադրի որոշմամբ:
8.8. 8.2. կետի 2-րդ ենթակետով սահմանված հարցերի վերաբերյալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են սույն կանոնադրության 12.1. կետում սահմանված կարգով:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասություններն իրականացնում է Հիմնադիրը (Բաժնետերը): Որպես Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներ կարող են ծառայել՝

- ՀՀ առողջապահության նախարարի հրամանները
- լիազոր ներկայացուցչի գրավոր որոշումները՝ իրեն սույն կանոնադրությամբ վերապահված իրավասությունների շրջանակներում:

8.9. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության Հիմնադիրը կամ նրա կողմից լիազորված անձը՝ Հիմնադրի կողմից սահմանված լիազորությունների շրջանակում, Ընկերության գլխավոր տնօրենը, ինչպես նաև վերստուգող հանձնաժողովի անդամները և աուդիտն իրականացնող անձը:

Ընկերության գլխավոր տնօրենը, ինչպես նաև վերստուգող հանձնաժողովի անդամները և աուդիտն իրականացնող անձը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:
8.10. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենը՝ Ընկերության վարչության հետ համատեղ:

Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերվող հարցերից: Գլխավոր տնօրենը կազմակերպում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումների կատարումը, հաշվետու է նրան և իրավունք չունի Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի համար պարտադիր որոշումներ կայացնելու:

Ընկերության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացնող Ընկերության: Նա պարտավոր է Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) պահանջով հատուցել իր կողմից Ընկերությանը անձին պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Ընկերության գլխավոր տնօրենը՝

1. Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից,

2. Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
3. Գործում առանց լիազորագրի,
4. Տալիս է լիազորագրեր,
5. Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
6. Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում տարադրամային) և այլ հաշիվներ,
7. Առաջարկություններ է նախապատրաստում Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ,
8. Ընկերության Ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,
9. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:
10. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,
11. Աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:
12. Կատարում է Ընկերության վարչության նախագահի պարտականությունները:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության գործադիր մարմնի (ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ) լիազորությունները պայմանագրով կարող են տրվել այլ առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի):

8.11. Ընկերության վարչությունը ներառում է Ընկերության տնօրենին, նրա տեղակալին (տեղակալներին), գլխավոր հաշվապահին, ինչպես նաև՝ Ընկերության այլ աշխատողներին:

Ընկերության վարչությունը՝

- քննարկում է պետական բյուջեից կատարվող հատկացումների հետ կապված հարցերը,
- որոշում է կայացնում Ընկերության կողմից վճարովի սկզբունքով իրականացվող ծառայությունների ցանկի, տեսակների և գների վերաբերյալ,
- քննարկում է ընկերության ստորաբաժանումների աշխատանքների արդյունքները,
- քննարկում է ընկերության ղեկավար կադրերի ընտրության և տեղաբաշխման հարցերը,
- քննարկում և պատրաստում է Ընկերության տնօրենի կողմից Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայացվող համապատասխան առաջարկություններ և նախագծեր՝ սույն կանոնադրության 8. 2. կետի 1-14 և 19-23 ենթակետերում նախատեսված դեպքերում,
- կատարում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի Ընկերության վարչությանը տրված հանձնարարականները,
- քննարկում է Ընկերության գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված այլ հարցեր:

8.12. Ընկերության վարչության նիստերն արձանագրվում են:

8.13. Արձանագրությունները տրամադրվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի անդամներին, վերստուգող հանձնաժողովին (վերստուգողին), Ընկերության աուդիտն իրականացնող անձին՝ նրանց պահանջով:

8.14. Ընկերության վարչության նիստերը կազմակերպում և վարում է Ընկերության տնօրենը, որը ստորագրում է վարչության որոշումները և վարչության նիստի արձանագրությունը:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

9.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն ընտրում է Ընկերության վերստուգող հանձնաժողով (վերստուգող):

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի

համապատասխանությունը օրենքների, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը:

Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) գործունեության կարգը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատվող ներքին փաստաթղթերով՝ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կանոնակարգով:

Վերստուգող հանձնաժողովը իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչպես նաև հիմնադրի պահանջով:

Վերստուգող հանձնաժողովը ստուգումների արդյունքներն ուղարկում է Ընկերության ընդհանուր ժողով:

Վերստուգող հանձնաժողովն ըստ տարեկան հաշվետվության և հաշվեկշռի կազմում է եզրակացություն: Առանց այդ եզրակացության Ընկերության հաշվեկշիռը ենթակա չէ հաստատման ընդհանուր ժողովի կողմից:

Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի պահանջել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարում:

Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, դրա առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

Վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը) ընտրվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 3 տարի ժամկետով:

Վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը) հաշվետու են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) վարձատրության կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ:

Վերստուգող հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված, բաժնետիրոջ կամ հիմնադրի լիազորված ֆիզիկական անձինք:

Վերստուգող հանձնաժողովի նախագահն ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

9.2. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ վերստուգիչ հանձնաժողովի իրավասությունները կարող են դրվել վերստուգողի վրա:

9.3. Ընկերության ամենամյա ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Ընկերությունը պարտավոր է ներգրավել Ընկերության հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչի (կազմակերպության կամ ֆիզիկական անձի)՝ աուդիտորի (արտաքին աուդիտ): Ընկերության աուդիտը իրականացնող անձն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքում ներկայացնում է գրավոր եզրակացություն:

Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքվում է Ընկերության գլխավոր տնօրենի կողմից, իսկ աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

9.4. Ընկերության ֆինանսական և տնտեսական գործունեության ստուգումը կարող է իրականացվել նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսական և այլ լիազորված մարմինների, հսկողական ծառայությունների կողմից՝ իրենց իրավասության սահմաններում:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1. ՀՀ տարածքում և նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ: Հիմնադրի թույլտվությամբ ՀՀ օրենսդրությանը համապատասխան Ընկերու-

թյունը կարող է ՀՀ տարածքում և նրանից դուրս ունենալ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

11.1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է ժողովին մասնակցած քվեարկող բաժնետերերի ձայների 3/4 - ով, իսկ կանոնադրական կապիտալի չափի մեծացման հետ կապված դեպքերում՝ ձայների մեծամասնությամբ:

11.2. Մասնաճյուղի և (կամ) ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները մտցվում են Ընկերության կանոնադրության մեջ: Այդ տեղեկությունների փոփոխությունների հետ կապված կանոնադրության փոփոխությունները ուժի մեջ են մտնում պետական գրանցումն իրականացնող մարմիններին ծանուցելու պահից:

11.3. Ընկերության կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ է մտնում դրանց պետական գրանցման պահից, իսկ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում պետական գրանցումն իրականացնող մարմնին ծանուցելու պահից: Սակայն Ընկերությունը և նրա բաժնետերը նման փոփոխությունները հաշվի առած երրորդ անձանց հետ ունեցած հարաբերություններում իրավունք չունեն վկայակոչելու այդ փոփոխությունների գրանցման բացակայությունը:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

12.1.Ընկերությունը բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել:

Եթե լուծարվող Ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

Ընկերության վերակազմակերպման և լուծարման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման ու լուծարման կարգը սահմանվում են Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով:

12.2. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել Օրենքով սահմանված կարգով միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման միջոցով:

Ընկերության վերակազմավորումը ոչ պետական կամ պետական մասնակցությամբ Ընկերության (ընկերությունների) իրականացվում է պետական գույքի մասնավորեցումը (սեփականաշնորհումը) կարգավորող օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

Ընկերության միացումը կամ միաձուլումը ոչ պետական ընկերությունների հետ համարվում է մասնավորեցում և իրականացվում է պետական գույքի մասնավորեցումը (սեփականաշնորհումը) կարգավորող օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

Բացի վերը նշված դեպքերից Ընկերությունը կարող է վերակազմակերպվել Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ:

12.3. Ընկերության լուծարումը հանգեցնում է Ընկերության դադարմանը առանց Ընկերության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցման:

Ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը կայացնում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների ոչ պակաս, քան 2/3-ով:

Լուծարային հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկվեն Հիմնադրի ներկայացուցիչները:

Լուծարման հանձնաժողով կազմելու պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման բոլոր լիազորությունները: Լուծարվող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

Նախքան լուծարման մասին որոշում ընդունելը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է հաստատի գլխավոր տնօրենի կողմից ներկայացված ամփոփիչ հաշվեկշիռը ու Ընկերության լուծարման նախագիծը:

Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (այդ թվում՝ լուծարային հանձնաժողովի կազմը) ենթակա են գրանցման իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում:

Լուծարումն իրականացվում է Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

12.4. Ընկերությունը, բացառությամբ այլ իրավաբանական անձի միացման ձևով վերակազմակերպման դեպքի վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից:

Ընկերությունն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս, վերակազմակերպված է համարվում Ընկերության գործունեությունը դադարելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից:

12.5. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից:

ՀՀ Պետական Ռեգիստրի
Արաբկիրի շրջանային բաժին
Գրանցման թիվ 852
«30» 04 2002 թ.